# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

/Տարածքի վարձակալության մասին պայմանագրում փոփոխություն կատարելու մասին/

քաղաք Երևան,
երկու հազար քսաներեք թվականի սեպտեմբերի քսանիինգին

ԽԱՉԻԿ ՀԱԿՈԲԻ ՁԱՔԱՐՅԱՆԸ/ծնված՝ 14/09/1950թ-ին, ՀԾՀ՝ 2409500145, նույնականացման քարտ՝ 003421013, տրված՝ 011-ի կողմից, 10/02/2014թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՏԵՐՅԱՆ Փ., 66 Շ, 23ԲՆ հասցեում/, այսուհետ՝ Վարձատու, մի կողմից, և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ» Պետական մարմինը/հասցե՝ Հայաստան, ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ԲԱՂՐԱՄՅԱՆ Փ., 19, 0019, գրանցման համար՝ 264.184.1017475, ՀՎՀՀ՝ 00061508/՝ ի դեմս գլխավոր քարտուղար ՎԱԶԳԵՆ ՀՄԱՅԱԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ/ծնված՝ 27/03/1977թ-ին, ՀԾՀ՝ 3703770104, նույնականացման քարտ՝ 005216544, տրված՝ 010-ի կողմից, 18/06/2014թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՄՅԱՍՆԻԿՅԱՆ Պ., 7 Շ, 2ԲՆ հասցեում/ , որի անունից, համաձայն լիազորագրի, հանդես է գալիս լիազորված անձ ԳՈՒՐԳԵՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՄԱՆԱՍՅԱՆԸ/ծնված՝ 29/09/1980թ-ին, ՀԾՀ՝ 3909800556, անձնագիր՝ AT0674333, տրված՝ 011-ի կողմից, 22/02/2021թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ԱՅԳԵՁՈՐԻ Փ., 10 Տ հասցեում//լիազորագիր՝ տրված 12/09/2023թ.-ին, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ» ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ գլխավոր քարտուղար ՎԱԶԳԵՆ ՀՄԱՅԱԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ կողմից/, այսուհետ՝ Վարձակալ, մյուս կողմից, որոնք ստորև առանձին հիշատակվում են նաև որպես «Կողմ» և միասին՝ որպես «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետով և Կողմերի միջև 06.02.2020թ.-ին կնքված Տարածքի վարձակալության մասին պայմանագրով (գրանցված սեղանամատյանում 229 համարով. այսուհետ՝ Պայմանագիր), եկան փոխադարձ համաձայնության՝ Պայմանագրում 01.09.2023թ.-ից (երկու հազար քսաներեք թվականի սեպտեմբերի մեկից) հետևյալ փոփոխությունը կատարելու մասին.

1. Պայմանագրի 3.1. կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.1. Վարձակալը Տարածքի տիրապետման և օգտագործման համար որպես վարձավճար Վարձատուին վճարում է ամսական 420 000 (չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:»:

2. Պայմանագրի մյուս պայմանները մնում են անփոփոխ:
3. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
4. Համաձայնագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող/դադարող/ իրավունքները, Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, ենթակա են 30-օրյա ժամկետում պետական գրանցման ՀՀ Կադաստրի պետական կոմիտեում, որի հետ կապված անհրաժեշտ ծախսերը կատարում է Վարձակալը:
5. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կնքելուց և նոտարական կարգով վավերացնելուց հետո՝ ՀՀ Կադաստրի կոմիտեում պետական գրանցման պահից:
6. Համաձայնագիրը կնքված է հայերեն, 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

7. Կողմերի ստորագրությունները:

| ՎԱՐՁԱՏՈՒ՝<br>ԽԱՉԻԿ ՀԱԿՈԲԻ ՁԱՔԱՐՅԱՆ | ՎԱՐՁԱԿԱԼԻ լիազորված անձ՝<br>ԳՈՒՐԳԵՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՄԱՆԱՍՅԱՆ |
|---|---|
| ստորագրություն | ստորագրություն |
| անուն, ազգանուն | անուն, ազգանուն |

**արական ակտի կոդ:** 781-20230925-117-7319689
**տարական ակտի գաղտնագիր:** SV8YHZ

ՀՀ, քաղաք Երևան
երկու հազար քսաներեք թվականի սեպտեմբերի քսանիինգին

Սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Երևան նոտարական տարածքի նոտար՝ **ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՄԵՆԻ ՏՈՆՈՅԱՆԻՍ** կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը ստուգված է, գործունակությունը՝ պարզված: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 301 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա է գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից՝ 30/երեսուն/ աշխատանքային օրյա ժամկետում:

Գրանցված է գրանցամատյանում թիվ 3205 -ով:

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Ռուզաննա Արմենի Տոնոյան